ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒ

Հունվար-Հունիս / 2013

1. ՀԱՄԱԽԱՌՆ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆՔ

2013թ. երկրորդ եռամսյակում ՀՆԱ իրական աճը ավելի ցածր է, քան առաջին եռամսյակում

Առաջին եռամսյակի համեմատ ՀՆԱ աճի դանդաղումը պայմանավորված է տնտեսության բոլոր ճյուղերի աճի տեմպերի անկմամբ և շինարարության ծավալների նվազմամբ

ՀՆԱ արտադրության կառուցվածքում էական տեղաշարժեր չեն արձանագրվել: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ 2.6 և 1.2 տոկոսային կետով նվազել են համապատասխանաբար շինարարության և գյուղատնտեսության տեսակարար կշիռները, իսկ ծառայություններինը՝ ավելացել 1.5 տոկոսային կետով

Զուտ հարկերի գծով գրանցվել է տեսակարար կշռի 2.3 տոկոսային կետով աճ

ՀՆԱ սպառման կառուցվածքում շարունակում են բարձր մնալ վերջնական սպառման ծախսերը:

Համախառն կուտակում/ՀՆԱ ցուցանիշը շարունակում է նվազել՝ 2013 առաջին եռամսյակի արդյունքով մոտ 1.7 անգամ զիջելով նախորդ 5 տարվա նույն ժամանակահատվածի միջինին

ՀՆԱ ԻՐԱԿԱՆ ԱՃ, %



ՀՆԱ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, %



ՀՆԱ ՍՊԱՌՄԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, %



ՀԱՄԱԽԱՌՆ ԿՈՒՏԱԿՈՒՄ/ՀՆԱ, %



2. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

Տնտեսական ակտիվության ցուցանիշը հունվար-հունիսին կազմել է 4.4%

2013թ. առաջին կիսամյակում տնտեսության բոլոր ճյուղերում աճ է արձանագրվել՝ բացառությամբ շինարարության՝ -8.8%:

Առավելագույն հավելաճ գրանցվել է արդյունաբերությունում՝ 8.3%

Տնտեսական ազատության 2013թ. ինդեքսում Հայաստանը 38-րդ տեղում է 69.4 միավորով՝ նախորդ տարվա համեմատ բարելավելով դիրքը 1 տեղով և 0.6 միավորով

Ըստ ազատության աստիճանի որակման՝ Հայաստանը շարունակում է մնալ չափավոր ազատ երկրների խմբում

Զբաղեցնում է առաջին տեղը ԱՊՀ երկրների շարքում, իսկ հարևան երկրներից զիջում է միայն Վրաստանին

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ, %



ԹՈՂԱՐԿՄԱՆ ԾԱՎԱԼԻ ԱՃ, % ՆԱԽՈՐԴ ՏԱՐՎԱ ՆՈՒՅՆ Ժ/Շ ՆԿԱՏՄԱՄԲ

	2007 S1	2008 S1	2009 S1	2010 S1	2011 S1	2012 S1	2013 S1
Արդյունաբերական արտադրանք	1.4	-0.2	-11.5	12.3	12.8	13.0	8.3
Գյուղատնտեսական արտադրանք	-1.9	8.1	-2.5	-13.1	2.3	8.1	2.1
Շինարարություն	17.2	14.0	-53.5	4.1	-13.8	-6.7	-8.8
Առևտրի շրջանառություն	11.6	5.9	-4.9	6.0	2.7	2.4	3.5
Ծառայություններ	18.5	16.2	0.9	6.1	6.3	12.0	4.4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏԿԵՐԸ 2013 Թ. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍՈՒՄ

	2013	Փոփոխ.
Դիրքը	38	▲ 1.0
Միավորը	69.4	▲ 0.6
Օրենքի գերակայություն		
Սեփականության իրավունքներ	30.0	— 0.0
Կոռուպցիայից ազատություն	26.0	— 0.0
Կառավարության մասնակցության չափ		
Ֆիսկալ ազատություն	88.0	▼ -1.3
Պետական ծախսեր	82.1	▲ 7.2
Կարգավորման արդյունավետություն		
Գործարար ազատություն	87.6	▼ -0.2
Աշխատուժի ազատություն	77.1	▲ 0.5
Մոնետար ազատություն	73.0	▼ -0.1
Բաց շուկաներ		
Առևտրի ազատություն	85.4	— 0.0
Ներդրումային ազատություն	75.0	— 0.0
Ֆինանսական ազատություն	70	— 0.0

3. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

2013թ. առաջին կիսամյակում արդյունաբերության աճի տեմպերը դանդաղել են՝ պայմանավորված հիմնականում մշակող արդյունաբերության աճի տեմպի նվազմամբ և մարտ ամսից սկսած «Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում» բաժնի ծավալների կրճատմամբ

Արդյունաբերության աճին առավելապես նպաստել են՝

- ✓ մետաղական հանքաքարի արդյունահանումը
- ✓ ծխախոտային արտադրատեսակների արտադրությունը
- ✓ սննդամթերքի արտադրությունը
- ✓ հիմնային մետաղների արտադրությունը
- ✓ խմիչքների արտադրությունը

Նշված ոլորտները (բացառությամբ սննդամթերքի արտադրության) արտահանման ընդգծված ուղղվածություն ունեն

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ

	Արտադրանքի ծավալը մլրդ. դրամ	Աճը 2012թ. նույն ժ/շ նկատմամբ, %	Կառուց-վածքը, %	Նպաստման չափը, տոկոսային կետ
Արդյունաբերություն	567.4	8.3	100.0	-
Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	99.3	16.5	17.5	3.0
Մշակող արդյունաբերություն	356.2	10.2	62.8	6.3
Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	103.4	-4.8	18.2	-0.9
Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառ. և վերամշակում	8.5	9.1	1.5	0.1

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՆ ԸՍՏ ՏԳ ԵՐԿՆԻՇ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

	Արտադրանքի ծավալ, մլրդ դրամ	Պատրաստի արտադրանքի իրացում, մլրդ դրամ	Արտահա-նում, մլրդ դրամ	Արտահանումը իրացման նկատմամբ, %
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ	567.4	553.4	219.2	39.6
Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	99.29	86.56	55.47	64.1
Մետաղական հանքաքարի արդյունահանում	96.94	83.85	54.54	65.0
Հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման այլ ճյուղեր	2.35	2.71	0.94	34.5
Մշակող արդյունաբերություն	356.23	354.92	154.71	43.6
Սննդամթերքի արտադրություն	131.78	127.00	6.77	5.3
Խմիչքների արտադրություն	49.41	47.77	31.88	66.7
Ծխախոտային արտադրատեսակների արտադրություն	16.68	18.04	13.43	74.5
Հագուստի արտադրություն	2.46	2.30	1.00	43.5
Թղթի և թղթե արտադրատեսակների արտադրություն	4.87	4.65	0.03	0.6
Պոլիգրաֆիական գործունեություն, գրառված կրիչների բազմացում	4.59	5.09	0.05	1.0
Քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրություն	3.41	3.98	0.90	22.5
Դեղագործական արտադրանքի արտադրություն	2.44	2.37	1.26	53.0
Ռետինե և պլաստմասսայե արտադ-րատեսակների արտադրություն	8.84	9.22	1.16	12.6
Այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն	22.29	20.99	5.43	25.9
Հիմնային մետաղների արտադրություն	82.97	87.19	78.91	90.5
Պատրաստի մետաղական արտադրա-տեսակների արտադրություն	6.24	5.84	0.69	11.8
Համակարգիչների, էլեկտրոնային և օպտ-իկական սարքավորումների արտադրություն	2.23	2.42	1.48	60.9
Էլեկտրական սարքավորանքի արտադրություն	2.34	2.39	1.23	51.3
Մշակող արդյունաբերության այլ ճյուղեր	15.68	15.66	10.49	67.0
Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	103.43	103.43	9.03	8.7
Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում	8.5	8.5	-	-

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, շարունակություն

Մշակող արդյունաբերությունում զգալի և անընդհատ ւն աճ են ցուցաբերել դեռևս փոքր տեսակարար կշիռ ունեցող ծխախոտային արտադրատեսակների, պատրաստի մետաղական արտադրատեսակների, դեղագործական արտադրանքի, թուղթ և թղթե արտադրատեսակների արտադրությունները

2013թ. սկզբից շարունակում են կրճատվել էլեկտրական սարքավորանքի և համակարգիչների, էլեկտրոնային և օպտիկական սարքավորումների ճյուղերի արտադրության ծավալները, այդուհանդերձ, վերջիններիս իրացման ծավալի ավելի քան 50 % ուղղվում է արտահանման

2013թ. I եռամսյակում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ արդյունաբերությունում կատարված օտարերկրյա ներդրումները նվազել են 30.5 տոկոսով

Ներդրումների 65.5 տոկոսն ուղղվել է հանքագործական արդյունաբերությանը



ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐՆ ԸՍՏ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՄԼՆ ԱՄՆ ԴՈԼԱՐ

	2007 Q1	2008 Q1	2009 Q1	2010 Q1	2011 Q1	2012 Q1	2013 Q1
Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	3.6	11.3	0.9	14.5	27.9	69.8	36.4
Մշակող արդյունաբերություն	13.1	26.2	5.2	10.5	15.6	11.0	11.8
Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	0.5	25.1	39.8	68.4	8.1	5.7	12.0
Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառ. և վերամշակում	0.4	-	1.1	-	-	-	-

ՄՇԱԿՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ

	Արտադրանքի ծավալ, մլրդ. դրամ	Աճը 2012թ. նույն ժ/շ նկատմամբ, %	Կառուցվածք, %	Նպաստման չափ, տոկոսային կետ
Սննդամթերք	131.8	7.7	42.5	2.9
Հիմնային մետաղներ	83.0	10.1	26.8	2.6
Խմիչքներ	49.4	11.5	15.9	1.6
Այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակներ	22.3	-0.8	7.2	-0.1
Ծխախոտային արտադրատեսակներ	16.7	74.3	5.4	1.8
Ոսկերչական արտադրատեսակներ	9.8	32.3	3.1	0.7
Ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակներ	8.8	-3.6	2.9	-0.1
Պատրաստի մետաղե արտադրանք	6.2	41.1	2.0	0.6
Այլ	28.3	-	8.2	0.3

4. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ֆինանսական և ապահովագրական գործունեությունն առաջատարն է ծառայությունների կառուցվածքում

Հայաստան ժամանող զբոսաշրջիկների թիվն աճել է 14.3%-ով

Մեկնողների թվաքանակը գերազանցում է ժամանողներինը շուրջ 22 հազար մարդով: Տարեվերջի դրությամբ զբոսաշրջության դրական սալդոն ապահովվում է սովորաբար երկրորդ կիսամյակի հաշվին

2013թ. առաջին կիսամյակում ՏՀՏ ոլորտի աճը կազմել է 11.9%, այդ թվում՝ ծառայությունները կազմում են ՏՀՏ ոլորտի թողարկման 87.7%:

Ոլորտի արտադրության անկումը 1.2 տոկոսային կետով ավելի խորն է նախորդ տարվա նույն ժամանակահատվածում արձանագրվածից

Ցանցային պատրաստվածության 2013թ. ինդեքսով Հայաստանը 3.8 միավորով 82-րդ տեղում է՝ նախորդ տարվա համեմատ բարելավելով դիրքը 12 տեղով և 0.3 միավորով

ԱՊՀ երկրների շարքում զբաղեցնում է 6-րդ տեղը, զիջում է բոլոր հարևան երկրներին, բացի Իրանից

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, %



ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

	2007 S1	2008 S1	2009 S1	2010 S1	2011 S1	2012 S1	2013 S1
Զբոսաշրջիկների թվաքանակ, հազար մարդ							
Ժամանողներ	183.1	207.5	207.0	230.2	266.2	281.0	321.3
Մեկնողներ	187.2	211.2	202.5	232.1	274.6	302.1	343.3
Զբոսաշրջիկների թվաքանակի աճ, %							
Ժամանողներ	36.3	13.3	-0.2	11.2	15.6	5.1	14.3
Մեկնողներ	37.8	12.8	-4.1	14.6	18.3	9.3	13.6

ՏՀՏ ՈԼՈՐՏԻ ԾԱՎԱԼ
ՄԼՐԴ ԴՐԱՄ/ԱՃ ՆԱԽՈՐԴ ՏԱՐՎԱ ՆՈՒՅՆ Ժ/Շ ՆԿԱՏՄԱՄԲ, %

	2009 S1		2010 S1		2011 S1		2012 S1		2013 S1	
ՏՀՏ, այդ թվում՝	90.8	2.3	92.3	5.8	94.0	-1.1	100.3	5.2	109.6	11.9
Արտադրություն	1.2	-54.8	0.7	33.0	1.0	9.7	0.9	-6.5	0.9	-7.7
Առևտուր	3.7	-20.5	4.4	60.5	9.8	29.9	9.4	-4.9	12.7	28.4
Ծառայություններ, որից՝	86.0	5.1	87.2	3.9	83.3	-3.7	89.9	6.4	96.0	10.3
Հեռահաղորդակցություն	76.2	5.7	77.5	3.5	74.6	-3.8	78.2	4.1	81.8	9.3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏԿԵՐԸ 2013Թ. ՑԱՆՑԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍՈՒՄ

	Դիրքը	Փոփոխ.	Միավորը (1-7)	Փոփոխ.
Ցանցային պատրաստվածության ինդեքս	82/144	▲ 12	3.8	▲ 0.3
Միջավայրի ենթաինդեքս	90	▲ 20	3.7	▲ 0.3
Պատրաստվածության ենթաինդեքս	73	▲ 17	4.6	▲ 0.3
Կիրառելիության ենթաինդեքս	79	▲ 10	3.4	▲ 0.2
Ազդեցության ենթաինդեքս	83	▲ 16	3.3	▲ 0.3

5. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

2013թ. առաջին կիսամյակում արձանագրվել է ներմուծման նկատմամբ արտահանման առաջանցիկ աճ

Արտահանմամբ ներմուծման ծածկույթի գործակիցը կազմել է 0.35՝ 1.12 անգամ ավելի բարձր, քան նախորդ տարվա նույն ժամանակահատվածում

Արտահանման ապրանքային կառուցվածքը համակենտրոնացման ավելի բարձր աստիճան է դրսևորել, քան ներմուծմանը. առաջին 4 խոշոր ապրանքախմբերի արտահանման և ներմուծման տեսակարար կշիռները կազմել են համապատասխանաբար 84.6 և 65.6 %:

Արտահանման մոտ 55% բաժին է ընկնում առևտրային հիմնական գործընկերներին՝ Ռուսաստան, Բելգիա, Բուլղարիա, Իրան, ԱՄՆ

ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԻ ԴԻՆԱՄԻԿԱ

	2007 S1	2008 S1	2009 S1	2010 S1	2011 S1	2012 S1	2013 S1
Արտաքին առևտրի ծավալ, մլն ԱՄՆ դոլար							
Արտահանում	525.1	519.9	284.1	460.2	603.1	636.8	699.7
Ներմուծում	1359.7	1902.1	1385.3	1706.6	1891.1	2013.6	1971.5
Առևտրաշրջանառություն	1884.8	2422.0	1669.4	2166.8	2494.2	2650.4	2671.2
Առևտրի հաշվեկշիռ	-834.6	-1382.1	-1101.2	-1246.4	-1288.0	-1376.8	-1271.8
Արտաքին առևտրի աճ, %							
Արտահանում	20.5	-1.0	-45.4	62.0	31.1	5.6	9.9
Ներմուծում	43.9	39.9	-27.2	23.2	11.0	6.5	-2.1
Առևտրաշրջանառություն	36.5	28.5	-31.1	29.8	15.3	6.3	0.8

ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, %



ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, %



6. ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

2013թ. առաջին կիսամյակում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ օտարերկրյա և օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալները նվազել են համապատասխանաբար 11.9 և 35.4%-ով

ՀՆԱ նկատմամբ օտարերկրյա և օտարերկրյա ուղղակի ներդրումների մասնաբաժինները հաշվետու ժամանակահատվածում ցածր են ճգնաժամային տարում (2009թ.) արձանագրված ցուցանիշից համապատասխանաբար 2.6 և 2.2 տոկոսային կետով

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱ

	2007 Q1	2008 Q1	2009 Q1	2010 Q1	2011 Q1	2012 Q1	2013 Q1
Օտարերկրյա ներդրումների ծավալ, մլն դոլար							
Օտարերկրյա ներդրումներ	137.7	165.9	186.3	162.2	130.6	148.7	131.0
այդ թվում՝ ուղղակի	89.7	91.7	139.3	116.9	93.7	89.3	57.7
Օտարերկրյա ներդրումների աճ, %							
Օտարերկրյա ներդրումներ	44.9	20.5	12.3	-12.9	-19.5	13.9	-11.9
այդ թվում՝ ուղղակի	95.6	2.3	51.8	-16.1	-19.9	-4.6	-35.4

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ/ՀՆԱ, %



ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ԸՍՏ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ, %



ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ, %



7. ԳՆԵՐ ԵՎ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

2013թ. առաջին կիսամյակում սպառողական գների ինդեքսը պահպանվել է թիրախավորված միջակայքում

Գների ամենաբարձր աճն է արձանագրվել ոչ պարենային ապրանքների գծով

Ինչպես և նախորդ տարվա առաջին կիսամյակում, հաշվետու ժամանակահատվածում նվազել է գյուղմթերք արտադրողների իրացման գների ինդեքսը

2008թ. ի վեր արձանագրվել է ներմուծման միջին գների ինդեքսի ամենացածր մակարդակը

Միջին ամսական անվանական աշխատավարձը կազմել է 142.6 հազար դրամ, նախորդ տարվա 138.8 հազար դրամի դիմաց

2013թ. երկրորդ եռամսյակում նվազագույն աշխատավարձը գերազանցում է նվազագույն պարենային զամբյուղը 1.4 անգամ, սակայն 1.3 անգամ զիջում է նվազագույն սպառողական զամբյուղին

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍԸ, ՆԱԽՈՐԴ ՏԱՐՎԱ ՆՈՒՅՆ Ժ/Շ ՆԿԱՏՄԱՄԲ, %

	2007 S1	2008 S1	2009 S1	2010 S1	2011 S1	2012 S1	2013 S1
Սպառողական գների ինդեքս	104.5	109.0	102.7	107.3	109.9	102.2	104.1
Պարենային ապրանքներ	105.6	111.1	99.2	105.1	114.8	101.8	104.5
Ոչ պարենային ապրանքներ	99.4	104.8	101.3	113.4	103.1	103.9	105.3
Ծառայություններ	105.3	107.1	110.0	108.5	105.0	102.0	102.6

ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍՆԵՐՆ ԸՍՏ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՏՎԱԾՆԵՐԻ, ՆԱԽՈՐԴ ՏԱՐՎԱ ՆՈՒՅՆ Ժ/Շ ՆԿԱՏՄԱՄԲ, %

	2007 S1	2008 S1	2009 S1	2010 S1	2011 S1	2012 S1	2013 S1
Արդյունաբերողների արտ. Գի	101.1	105.2	96.9	132.6	112.6	106.1	104.8
Գյուղմթերք արտ. իրացման Գի	105.6	84.9	88.6	117.7	135.9	96.4	91.9
Արտահանման միջին Գի	92.5	99.1	80.3	133.2	112.6	97.0	104.0
Ներմուծման միջին Գի	97.8	107.2	112.9	106.6	107.4	108.9	104.4

ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ, ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԵՎ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԶԱՄԲՅՈՒՂՆԵՐ, ԸՆԹԱՑԻԿ ԳՆԵՐՈՎ, ՀԱԶԱՐ ՀՀ ԴՐԱՄ